ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

ՀՐԱՄԱՆ № 34

«30» 04 2020 թ. գ. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 19-Ի N 3 ՀՐԱՄԱՆՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

2020 թվականի մայիսի 2-ից ուժի մեջ է մտնելու «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության ՀՕ-207-Ն օրենքը, որով սահմանվում է կոռուպցիոն հանցագործությունների ցանկը:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Դատախազության մասին» օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ և 7-րդ կետով, 30-րդ հոդվածի 3-րդ մասով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածով՝

Հրամայում եմ՝

1. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2017 թվականի հունվարի 19-ի՝ «Կոռուպցիոն հանցագործությունների ցանկը հաստատելու և Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2008 թվականի նոյեմբերի 19-ի N 82 հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 3 հրամանը:

2. Մինչև սույն հրամանն ընդունված և գործող՝ Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի ու նրա տեղակալների ներքին իրավական ակտերում՝ «Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 19.01.2017թ.՝ «Կոռուպցիոն հանցագործությունների ցանկը հաստատելու և Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2008 թվականի նոյեմբերի 19-ի N 82 հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին N 3 հրաման»» բառերը և դրանց համապատասխան հոլովաձևերը փոխարինել «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 6-րդ հավելվածով նախատեսված հանցագործություններ» բառերով և դրանց համապատասխան հոլովաձևերով:

3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում 2020 թվականի մայիսի 2-ից:

4. Սույն հրամանի կատարման վերահսկողությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազը:

5. Սույն հրամանի պատճենն ուղարկել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության վարչությունների պետերին և ավագ դատախազներին, Հայաստանի Հանրապետության զինվորական կենտրոնական դատախազության բաժինների պետերին ու ավագ դատախազներին, մարզերի, Երևան քաղաքի, Երևան քաղաքի վարչական շրջանների և կայազորների զինվորական դատախազներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի խորհրդականներին և օգնականներին, Հայաստանի Հանրապետության դատախազության գլխավոր քարտուղարին:

Ա.ԴԱՎԹՅԱՆ